

Տարօն-կիլիկիա ոգիսականին: Դէպի արեւմուտք
ոստիկանութիւնը աւելի լաւ էր կազմակերպուած:
Նահանգէ նահանգ օտարականները կ'ենթարկուէին
լուրջ քննութեան: Հայահալած մարմինները մասնակի
հրահանգներով անկարելի կ'ընէին միջակ իմացականու-
թեամբ մարդոց փոխադրումը մէկ նահանգէն միւսը:
Անցագիրը՝ պարտաւորիչ:

Առաջնորդը ճարեց անոր հատ մը, օրինական բոլոր
ապահովութեամբ: Պահեց անոր հարազատ անունը,
չվստահելով անոր ուշադրութեան, որ ոստիկանական
ստուգումներու պահուն կրնար թերանալ ու մոռնալ
վախը: Բայց կտրատեց մականունը, Մելիքխանեանցը
վերածելով Մելիք օղլուի ու ծննդավայր տալով Ատանան,
խոշոր ու մտքէն չիյնալու հափ փայլուն բառ: Կապեց
անոր մէջքին բաւական դրամ, մէկ մասը անձնական
քսակէն, միւս մասն ալ Աղքատախնամի պիւտճէէն: Օրե-
րով, ճամբու դնելէ առաջ, եկեղեցականի յամառու-
թեամբ, վարժապետօրէն, մէկիկ-մէկիկ երկնեց այն
անհրաժեշտ զգուշութիւնները, որոնց յարգումը կամ
զանցառումը իր այնքան նուիրական ձեռնարկը կը պայ-
մանէին: Վճռական արգելք՝ անուններէ, տեղերէ, հասցէ-
ներէ, ամէն ազգի համար: Երկու օր աշխատանքով անոր
ձեռքը տուաւ թիւերով յօրինուած ծածկագրութեան
եղանակ մը, բոլորովին անվնաս, օրական ծախքերու ձե-
ւին տակ, հացով կամ պանիրով փոխարինելով քաղաք-
ներն ու մարդերը: Արգիլեց դարձեալ յեղափոխական
քարոզչութիւնը, մէկիկ-մէկիկ գուշակելով այն բոլոր
անպատեհութիւնները, որոնք կրնային գալ յառաջ, նման
արարքէ մը: Երկսայրի սո'ւր, անոնց գլխուն, այդ յեղա-
փոխութիւնը, քանի որ իր կազմակերպութիւնը զինքը
կ'ուրանար: Միւս կողմէն՝ իր երեւումը այդ քարոզով,
կասկած պիտի բերէր իր ժողովուրդին իսկ մէջը: Արգիլեց
ամէն գնով թղթակցութիւնն ալ իրեն հետ, հիմնական
պատճառ ցոյց տալով իր ներկայութիւնը քաղաքին մէջ:
Առաջնորդը, Աղքատախնամէն ձեռք բերած վկայականով